

7-26

ՀԱՅՐԱՄ ԴԱՐՅԱՆ,

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՅԵՐԵՎԱՆ ~★~ 1938

796

7-27

796
7-27

Վ. ԴԱՐՅԱՆ

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍԽՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻՆ ԿԻՑ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՍՊՈՐՏԻ ԳՈՐԾԵՐԻ ԿՈՄԻՏԵՑԻ

Յ Ե Ր Ե Վ Մ Ն

1938 թ.

29 MAR 2013

872A

25 OCT 2010

ՀԱՍԱՆԱԾԱԿԱՆ ԱՄՐՈՑ, ՎՈՐ ՀԿԱՐՈՂԱ-
ՆԱՆ ԳՐԱՎԵԼ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ

Ի. Վ. ՍՏԱԼԻՆ



6216

38



3293 - 84

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ներկա «Ալպինիզմը Հայաստանում» աշխատությունը նրա գրվել է ՀԱՄԿԽ-ի Հայաստանի երթևեկություն---տուրիստական վարչության հանձնարարությամբ՝ ալպինիզմի ներքին կոնֆերանսում ղեկավարում կարգավոր կապակցություններ:

Սակայն հետադաշում, նկատի ունենալով ալպինիզմի վերաբերյալ գրականության բացակայությունը և այն մեծ պահանջը, վոր առաջադրվում է մեր յերիտասարդության կողմից դեպի ալպինիզմը, նպատակահարմար համարեցինք ապագրության հանձնել այն առանձին գրքով:

Վ. ԴԱՐՅԱՆ

1.

Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Խորհրդային ժողովուրդը սիրում է սպորտը: Մեր
յերկրում աճում ու բարձրանում է ուժեղների և համար-
ձակների մի նոր սերունդ, լի սոցիալիստական վառ
հայրենասիրությամբ, պատրաստ ստեղծագործական աշխա-
տանքի և տոգորված մեր սքանչելի խորհրդային հայրենիքի
պաշտպանության բարձր գիտակցությամբ:

Կոմունիստական կուսակցությունը, խորհրդային
իշխանությունը և ընկեր Սալիխը բացառիկ ուշադրու-
թյուն են հատկացնում ֆիզիկական կուլտուրայի և
սպորտի զարգացմանը:

Մեր յերկրում սպորտով զբաղվում են միլիոնավոր
յերիտասարդ մարդիկ: Մեր լավագույն մարզիկները, հրա-
ձիգները, վազողները, ֆուտբոլիստները և ծանրություն
բարձրացնողները ամբողջ յերկրի պարծանքն են հանդի-
սանում:

Ֆիզկուլտուրայի և սպորտի այդ ձևերի մեջ իր
յուրահատուկ տեղն ունին աւելի քան տուրիզմը՝ ալպինիզ-
մը: Ալպինիզմը սպորտի ամենախառաքելագործված ձևերից
մեկը լինելով, իր պատվավոր տեղն ունի խորհրդային
սպորտի մեջ: Նա ոժանդակում է մարդու բազմակողմանի
զարգացմանը՝ զարգացնում է նրա մեջ ֆիզիկական ուժ,
ճարպկություն, յերեմուլթյունների ճիշտ ըմբռնողություն,

լեռնային վատ պայմաններում կողմնորոշվելու ընդունակություն, համարձակություն անհատականություն, կոլեկտիվ զգացում և այլն:

Ալպինիզմն առանձնահատուկ նշանակություն ունի նաև մեր յերկրի ընդհանուր, մասնավորապես լեռնային սահմանների պաշտպանության գործում: Ալպինիզմը դաստիարակել է և աճեցրել մեր յերկրում անվեհերներին և համարձակների յմին՝ սքանչելի սերունդ, վորոնց սնունդները վաղուց հայտնի են խորհրդային աշխարհին:



Ահա նրանք:

ՊԱՄԻՐԻ՝ 1932 թվի հայտնի եքսպեդիցիայի մասնակիցներ՝ վաստակավոր ալպինիստներ, աղադեմիկոս Գարբուշովը, Աբուլահովը, վորոնք խորհրդային միության մեջ առաջին անգամ բարձրացել են Պամիրի լեռնաշղթայի վրա, Սալիսի լեռնագագաթը, վորի վերելքը կապված է

հակառակահեղ զգվարությունների հետ, ալպինիզմի վարպետ Բարխաշը և վերջապես Վրաստանում ալպինիզմի վարպետներ՝ Գվալիան, Ջափարիձեն և մյուսները:

Նման խիզախ ալպինիստների բազմաթիվ անուններ կարելի է հիշատակել:


Այժմ խորհրդային միության մեջ մենք ունենք մոտ 9 հազար հոգի «ԽՍՀՄ ալպինիստ»-ի առաջին աստիճանի և 50 հոգի յերկրորդ աստիճանի կրճառչան ունեցողներ:



Միայն 1937 թվի ընթացքում հախատեսանված էյին ալպինիստների մասսայական մի շարք արշավներ դեպի Կովկասի, Տյան-Շանի, Ալթայի, Սայանյան լեռների յերկնամբարձ գագաթները, և կազմակերպվեց մի եքսպեդիցիա ամենազգվար մարշրուտով դեպի Սալիսի լեռնագագաթը Պամիրի խորքում, 7495 մետր ծովի մակերևույթից բարձր:

Այս եքսպեդիցիային մասնակցում էին ամենափորձ-
ված ալպինիստները, 2-րդ աստիճանի ալպինիստական
կրծքանշան ունեցողները, փորոնք բարձրալեռ արշավների
մեծ փորձ ունեյին: Այդ արշավը հաջողությամբ ավարտվեց:

Այժմ արդեն ալպինիզմը դարձել է մեր յերիտասար-
դության և աշխատավորների ամենասիրելի սպորտը:
Ամեն տարի հարյուրավոր ալպինիստներ բարձրանում են



Կովկասյան լեռնաշղթայի անմատչելի գագաթները՝ Ել-
բրուս, Կադբեկ, Ուժբա, Դիխաուու, Թեթնուլթ և Սվա-
նեթիայի այլ լեռնագագաթներ: Բազմաթիվ ալպինիստներ
ամառն անց են կացնում մեր լեռնային ալպինիստական
ճամբարներում՝ Տեգենեգլի, Ադիրսու և այլն:

Այժմ Խորհրդային Հայաստանում մենք ունենք մոտ 20
հոգի «ԽՍՀՄ ալպինիստ»-ի պատվավոր կրծքանշան կրողներ
և մի քանի հարյուր հոգի հանրապետական ալպինիստներ:

փորոնք բարձրացել են մեր լեռները— Արագած, Հադիս,
Մայմեխ, Աղմաղան և այլն:

Կոլտնտեսական ունեվոր կյանքին ղուգընթաց, մեր
աշխատավորության նյութական բարեկեցիկ կյանքի
ստեղծման հետ միաժամանակ, սկսեցին խտանալ նաև
Հայաստանի ալպինիստների շարքերը և ալպինիստական
շարժումն ընդունեց մասսայական բնույթ:

Այժմ միանգամայն լուրջ կերպով դրվում է ալպինիս-
տական կադրերի քաղաքական դաստիարակության և ալպի-
նիզմին տիրապետելու խնդիրը:



Մեր ալպինիստական արշավներն ամեն ժամանակ
պետք է պարզ նպատակադրում ունենան, փորպեսզի
դրական արդյունքների հասնենք: Մեր ալպինիս-
տական կամ, ավելի ճիշտ կլինի ասել, լեռնային արշավ-
ները չպետք է վերածվեն լեռներում կատարվող զբո-
սանքի կամ սովորական ճամբորդության:

ԻՆՁ Ե ԱԼՊԻՆԻԶՄԸ

Ալպինիզմը մոշ միայն լեռնային սպորտ է կառուցված և սպորտ լեռնաբանության, այլ նաև գիտական ուսումնասիրությունն է՝ բարձր լեռնային շրջապատում:

Խորհրդային ալպինիզմի նպատակը մոշ միայն սպորտային է, ինչպես որինակ՝ գագաթներ բարձրանալը, գահուկային և սահնակային սպորտ և այլն, այլ նա հետապնդում է նաև գիտական և գործնական մի շարք կարևոր խնդիրներ:

Լեռների ուսումնասիրությունը յերկրաբանական, բուսաբանական և կենդանաբանական տեսակետից, սառցադաշտերի ուսումնասիրությունը, բարձր լեռնային օդերևույթաբանական յերևույթների ուսումնասիրությունը, քարտեզներ կազմելը-ահա թե ինչպիսի գիտական և գործնական խնդիրներ է հետապնդում խորհրդային ալպինիզմը:

Ահա «աշխարհի տանիքը» համարվող՝ յերկար տարիներ ընթացքում անմատչելի Պամիրը: Տարեց-տարի ավելի ու ավելի բարձրանում է վարագույրը գեպի այս առեղծվածային յերկիրը: Քայլ առ քայլ մոտաք են գործում այնտեղ խորհրդային մարդիկ, բնության տարերքը սանձահարող ալպինիստները և հետազոտողները:

Նրանք քարտեզի վրա յեն անցկացնում մինչև այժմ անհայտ գետակները, վտակները, նույնիսկ գետերն ու լեռները, նվաճում, յենթարկում են իրենց բարձունքները, ուր մարդկային վտաքը չեր կպել, և այդ վայրերի հարուստ ընդերքն ի սպասկեն գնում սոցիալիստական շինարարությունը:

Այնտեղ, վորտեղ բեռնված ուղտերը խեղդվում են յին լեռները բարձրանալիս ձյան փոթո-

րիկներից, վորտեղ մարդիկ լեռնային հիվանդությամբ բռնված հետ են յին մոտ քարավաններից, այդ նույն վայրերում այսօր սլանում են ավտոներ, վորոնք կուտուրային մացնում լեռնային Բադեշխանի խուլ ու խավար կիրճերում: Յեվ մոշ միայն Բադեշխանում: Խորհրդային Տաճիկստանի ալպինիստները մեծ գործ են կատարել:



Տաճիկստանը, վորը մի ժամանակ սպիտակ բիծ եր քարտեզի վրա, մոռացված մի լեռնային յերկիր, իր սեփական իշխանների ու ցարական շինովնիկների ծաղրին ու ճնշմանը յենթակա, խղճուկ հովվական կենցաղով, վորդումելի զշլաղներով, այժմ անձանանչելիորեն փոխվել է:

Ամեն տարի բազմաթիվ ալպինիստական եքսպեդիցիաններ միշտ նորանոր ճանապարհներ են բաց անում, նորանոր լեռնագագաթներ հայտնաբերում, հովիտներ, գետեր, ամայի տարածություններ անվանակոչում և քարտեզի

վրայի նախկին սպիտակ բծերը գծադրում, լցնում: Նույն բանը կատարվում է նաև Կովկասյան լեռնաշղթայի, Սվանեթիայի լեռների և վերջապես Պորհրդային Հայաստանում՝ Արագածի վերաբերմամբ:

Ահա՝ թե ինչպիսի խոշոր գիտական նշանակություն ունի ալպինիզմը մեր յերկրում: Սակայն չպետք է մոռանալ, վոր բարձր լեռներ բարձրանալը կապված է մեծ զգվարությունների և կյանքը վտանգի յենթարկելու հետ:

Այդ է պատճառը, վոր ալպինիստից պահանջվում է ուժերի մեծ լարում, դիմացկունություն, (առանձնապես սրտի անոթային սխտեմի), վճռականություն, ճարպկություն և անվախություն: Ահա թե ինչու ալպինիստից պահանջվում է նախնական լուրջ մարզում (տրենիրովկա), ալպինիստական տեխնիկայի տեսական և գործնական հիմնական ծանոթություն: Մի շարք լեռներում (Վրաստանի լեռները, Կովկասյան լեռնաշղթան, Պամիրը) գագաթների նվաճումն այնքան բարդ տեխնիկա և վարժվածություն է պահանջում, վոր նույնիսկ հաճախ փորձված ալպինիստներն անգամ տեղանքին լավ ծանոթ ուղեկցողներ պիտի ունենան: Անգամ Հայաստանի լեռներում այդ պահանջը հաճախ զգացվում է, և այդ տեսակետից պետք է լուրջ նախապատրաստված լինի յուրաքանչյուր լեռնային արշավ:

Չպետք է մոռանալ, վոր Հայաստանի ալպինիստական կադրերը յերիտասարդ են և զեռևս լավ ծանոթ չեն լեռնային տեխնիկային, մեր յերկրին, մեր լեռների առանձնահատկություններին: Մեզ մոտ ալպինիզմի ուղղությունը մինչայժմ կատարված աշխատանքը անբավարար է:



Յեթե մենք վերցնելու լինենք բոլոր այն դժբախտ
դեպքերը, վորոնք տեղի յեն ունեցել լեռներում 1932-35
թվականներին, վոչ միայն մեզ մոտ՝ հայաստանում, (ինչ-
պես 1935 թվի Արագածի դժբախտ դեպքը), այլ նաև խոր-
հրդային միության մյուս հանրապետութիւններում, ապա
կտեսենք, վոր նրանց մեծամասնութիւնը տեղի յեն
ունեցել սկսնակ ալպինիստների հետ, վորոնք չեն իմա-
ցել լեռներ բարձրանալու տեխնիկան, կամ վատ են
տիրապետել այդ տեխնիկային կամ չեն իմացել լեռնե-
րում շարժվելու և գործելու պայմանները: Առհասարակ
մեզ մոտ լեռներ բարձրանալու կանոնների ժողովրդա-
կանացումը միշտ հետ ե մնացել այդ շարժման ընթացքից:

Մի ուրիշ խնդիր, վորը կազմում ե ալպինիզմի
առանցքային, եյական հարցերից մեկը՝ դա նրա ռազմա-
կան նշանակութիւնն ե, մեր յերկրի պաշտպանության
խնդրում:

Խորհրդային ալպինիստը գնում ե լեռները վոչ մի-
այն վայելելու բնության սքանչելի լեռնային գեղեցկու-
թիւնը, այլ նա գիտակցում ե նաև այն խոշոր պարտա-
կանութիւնը, վորն ընկնում ե ամեն մի խորհրդային
քաղաքացու վրա, վորի սրտում վառվում ե պրոլետարա-
կան վառ հայրենասիրության զգացմունքը՝ յերկրի պաշտ-
պանության կարևոր գործն ամուր հիմքերի վրա դնելու
տեսակետից: Ալպինիզմի ռազմական նշանակութիւնը
շատ մեծ ե:

Ահա հունգարական ռազմագետ Չանտը, վորը գրում ե.
«1919 թվի ձմռանը Կարպատյան լեռներում տեղի ունե-
ցած մարտերում ռուսական զորքերը խայտառակ կերպով
ջախջախվեցին այն պատճառով, վոր նրանք ծանոթ չէին

62/6
38



լեռնային տուրիզմին», հետևաբար նաև լեռնային ճանապարհների պայմաններին և լեռներում գործելու առանձնահատկություններին: Բուրժուական մի շարք յերկրներ ընկածներում լուրջ ուշադրություն է դարձվում այս խնդրի վրա և այնտեղ գործում են ռազմական լեռնային հատուկ կանոնադրքեր, վորով վարժեցնում են նրանք իրենց զորքերը լեռներում գործելու, պատերազմելու տեխնիկային: Ուրիշակ՝ ֆրանսիայում կա հատուկ կանոնադրք՝ «Ուղեցույց լեռներում գործող խոշոր զորական միավորների»: Այս կանոնադրքի մեջ բուրժուական ռազմագետներն ոգտագործել են Յեվրոպայի հարավում և արևմուտքում լայն չափով զարգացած լեռնային սպորտի փորձը, ուր հաշվի չեն առնված բարձրալեռ վայրերում բոլոր այն խնդիրները, վորոնք կարող են ծագել մանր զորական ստորաբաժանումների գործողությունների ժամանակ: Այնտեղ հաշվի չեն առնված նաև ֆրանսական բանակի արալիական հրաձիգների գնդերի գործողությունների փորձը, գրված պարզ և սեղմ, ռազմական կանոնադրքի լեզվով: Այդպիսի կանոնադրքեր կան նաև բուրժուական մի շարք այլ բանակներում:

Բուրժուական ոգտագործում է արալինիզմը ճնշելու և սարկացնելու բանվոր զասակարգը, Թեղանոթի միս դարձնելու նրան, քողարկելով իր պատերազմները բուրժուական հայրենիքի պաշտպանություն կեղծ լոգունգների տակ:

Շատ հետաքրքիր է, Թե ինչպես Ֆրանսիական գրող Մելինի՝ «Путешествие на край ночи» հայտնի վեպի հերոսներից մեկը, դառնություն խոսում է այն ամենաստոր ցինիզմի մասին, վորով բուրժուական ագիտացիա չե

անում ժողովրդին պաշտպանելու կապիտալիստական հայրենիքը:

— ԲՈՒՈՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԹՆԴԱՆՈԹԻ ՄԻՍ ԵՆՔ, ՀԵՐՈՍՆԵՐԸ՝ ԽՈՍՈՂ ԿԱՊԻԿՆԵՐ՝ — ահա այն բառերը, վորոնցից մարդ ցավ է զգում: Նրանք ծածկում են ցիլինգր և սկսում են պերճորեն շմեցնել մեզ:



«Սրիկաներ» պատերազմն սկսվել է: Մենք կհասնենք մինչև № 2 հայրենիքի անդամները և կվոչնչացնենք նրանց: Ա՛ռա՛: Առա՛՛՛ ապա, խմբովին: Ապա, դեռ սկզբում՝ այնպես աղաղակենք, վոր ամեն ինչ գողգողա՛ կեցցե՛ № 1 հայրենիքը: Վորպեսզի ձեր ձայնը լսվի ամեն ուրեք: Նա, ով բոլորից բարձր կդուռա, կստանա շքանշան և քրիստոսի նվերը: Սատանան տանի +»:

Այսպես ե կապիտալիստական յերկրներում, վորտեղ մարդը գնահատվում ե միայն վորպես ապրանք, ճգմվում ե արհամարհվում ե աշխատանքի մարդը, վորտեղ իշխում են ֆաշիստական մարդատյաց գաղափարները:

Հայրենիք: Այս բանն առանձնապես թանկագին ե հարգատեղաւ մեր յերկրի յուրաքանչյուր աշխատավորի համար Մեծ Հոկտեմբերյան Սոցիալիստական Հեղափոխութեան ուրից, յերբ միլիոնավոր մարդիկ ձեռք բերին իրենց իսկական, հարգատեղաւ հայրենիքը, վորը նրանք պաշտպանում եյին ե զենքը ձեռներին պաշտպանեցին բազմաթիւ թշնամիներից:

«Մեզ մոտ հերոսութիւնը մտել ե ժողովրդի կենցաղի մեջ: Մեր յերիտասարդութիւնը չի թունափորված կաննիբալական, մարդատյաց գաղափարներով: Մեր յերկրում աճում ե պրոլետարիան հայրենասերների մի հզոր բանակ, վորի համար չկան անմատչելի ամրոցներ, վորոնց նա չկարողանար աիլել»: (Ժգանով):

Անցյալի մի շարք պատերազմներ յեկել են առաջացելու, վոր լեռնային պայմաններում տեղի ունեցող մարտերում հաղթանակը միշտ կախված ե յեղել այն բանից, թե պատերազմող կողմերից ով ե լավ տիրապետում լեռնային վերելքի ե վայրեջքի տեխնիկային ե ինչ չափով ե նա ծանոթ լեռնային ճանապարհներին:

Ռուս մեծ ժողովուրդն իր հիշողութեան մեջ խորին հարգանքով ե պահպանում խոշորագույն զորավար, ռազմական տեսաբան ու պրակտիկ, բոցաշունչ հայրենասեր Սուվորովի պատկերը: Նրա ղեկավարած ռուսական բանակը չգիտեր պարտութիւն Ռուսաստանի թշնամիների դեմ մղված մարտերում:

1799 թվի փետրվարին, Անգլիայի ե Ավստրիայի ձնշմամբ Ռուսական ՊԱՎԵԼ 1-ին կայսրը, հակառակ իր կամքի ե ցանկութեան, ստիպված դիմեց ՍՈՒՎՈՐՈՎԻՆ, անցնելու դաշնակից զորքերի ղրութը, վորոնք դնում եյին Իտալիա կովելու Նապոլեոնական զորքերի դեմ:

Յերեք ե կես ամսում նա վոչնչացրեց Նապոլեոնա-



կան մարշալներին ե ադատադրեց Իտալիան, վորի նվաճման վրա Նապոլեոնը զործադրել եր մոտ մեկ ե կես տարի:

ՍՈՒՎՈՐՈՎԻՆ անսպասելիորեն առաջարկում են իր զորքերն շտապ տեղափոխել Ալպյան լեռների վրայով ե միանալ Ռիմսկի Կորսակովի զորքերի հետ, Նապոլեոնին մյուս ճակատում ես հարվածելու համար:

Սուսմորովը կազմակերպում է ուսանական զորքի հե-
րոսական անցումն Ալայյան լեռների վրայով ձմռան դա-
ժան պայմաններում և հերոսաբարկատարում է իր առաջ
դրված խնդիրը:

Նա ալեյի ծանր պայմաններում և մեծ հաջողու-
թյամբ կրկնում է Հաննիբալի և Կեսարի արշավները:

Հայտնի չե Կարթագենի՝ Հին Աշխարհի խոշորագույն
զորավար, Իսպանական փոխարքա և Կարթագենի զորքե-
րի գլխավոր հրամանատար Հաննիբալի արշավը, նրա՝
վորը յերկրորդ պունիկական պատերազմի սկզբին (218
թվին) դուրս գալով Իսպանիայից, անցավ Ալպերի վրա-
յով, և կորցնելով այդ դժվարագույն արշավի ընթացքում
համարյա իր զորքի կեսը, իջավ Իտալիա և մի շարք հազ-
թանակներ տարավ:

Մեծ զորավար Նապոլեոն Բոնապարտը իտալական պա-
տերազմի ժամանակ՝ 1800 թ. Սեն-Բերնարդի մոտ մղվող կա-
տաղի կռիվների որերին, ֆրանսիական բանակն անցկա-
ցրեց Ալպյան ձյունապատ լեռների վրայով գեպի Ի-
տալիա և խոշոր հաղթանակներ տարավ:

Սակայն, բոլոր հին տիրակալները և խոշոր զորա-
վարներն իրենց բարձրալեռ անցումները կատարել են
հազարավոր մարդկանց կյանքի դնով, կանգ չառնելով
զոհերի առաջ, վորովհետև լեռնային վերելքի տեխնիկա-
յին լավ չեյին տիրապետում, ալպինիզմը դեռևս այնքան
եւ տարածված չէր, ինչպես այդ զործով սկսեցին զբաղ-
վել հետագայում:

Ահա թե ինչու այժմ բոլոր բանակներում հատուկ
ուշադրություն են դարձնում լեռնային պայմաններում զոր-
ժեղու տեխնիկայի վրա, ահա թե ինչու հատուկ ուշադրու-

թյուն է դարձվում ալպինիզմի զարգացման վրա բոլոր
յերկրներում:

Ալպինիզմը բացի այն, վոր խոշոր ռազմական նշա-
նակություն ունի, մեզ մոտ՝ խորհրդային ալպինիզմը նաև
լավագույն միջոցն է աշխատավորների առողջացման
համար:

Ալպինիզմը հազարավոր աշխատավորների մեջ դաստիա-
րակում է անվախություն և համարձակություն, վորը կազ-
մում է մեր սոցիալիստական հրապանչ եպոխայի մար-
դու առանձնահատուկ գիծը: Խորհրդային ալպինիզմը նրա-
նով է առանձնահատուկ, վոր նա մասսայական է, ընդգր-
կում է իր մեջ հազարավոր աշխատավորների: Բուրժուա-
կան ալպինիզմն ընդհակառակը՝ ինդիվիդուալիստական է,
ունի անհատական բնույթ: Բուրժուական ալպինիզմը, դա
մի խումբ հզվացած բուրժուաների դատարկ ժամանցի
միջոց է, լոկ անձնական հաճույքի համար բարձր լեռնե-
րում լավ կահավորված հյուրանոցներում, կանոնավոր
ձանապարհներով վայրերի դիտում և զբոսանք է:

Ահա ալպինիզմի այն առանձնահատկությունները,
վորոնց պետք է լավ ծանոթ լինի յուրաքանչյուր սկսնակ
ալպինիստ:

III.

ԱԼՊԻՆԻԶՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բարձր լեռնային տուրիզմը — ալպինիզմը՝ Հայաստանում
հանդիսանում է բացառապես Խորհրդային Իշխանության
ծնունդ: 1930 թվականին Հայաստանի Կոմյեբիտմիության
նախաձեռնությամբ ծնունդ առավ նախկին Պրոլետտուրիզ-
մի ընկերությունը, վորն աճեց և հետագայում դարձավ մի

խոշոր հասարակական կազմակերպություն: Իր գոյությունը ընթացքում նա խորը արժանատիքներ գցեց մեր աշխատավորական լայն զանգվածների մեջ: Մեր յերկրի բանվորները, կոլտնտեսականները և վողջ յերիտասարդությունը շատ սերտ և անքակտելի կերպով կապված են ալպինիզմի հետ:



Ալպինիզմի—լեռնային տուրիզմի սկիզբը մեզ մոտ պետք է համարել 1929 թվականը, յերբ առաջին անգամ փորձ արվեց մեզ մոտ ևս կազմակերպել լեռնային արշավներ: Դա առաջին արշավներն էին զեպի Արագած սարի գագաթները: Սակայն ալպինիզմն ավելի սկսեց ծավալվել և մասսայական բնույթ ստանալ միայն 1934 թվականից, յերբ կազմակերպվեց առաջին աստղաձև արշավը զեպի Արագած լեռը, և ապա՝ 1935 թվականին, յերբ ալպինիզմի պատմության մեջ առաջին անգամ կազմակերպվեց

հազար հոգու մասսայական աստղաձև արշավը զարձյալ զեպի Արագած լեռը, Հայաստանի Լենինյան Կոմյեբրտմիություն կազմակերպության նախաձեռնությամբ:

Այնուհետև՝ հետագա տարիներին կատարվեցին մի շարք լեռնային վերելքներ զեպի Աղմազանի լեռները, Մայմեխ, Հադիս, Արայի սարը և զեպի Նլբրուս:

Միայն 1934 թվականի լեռնային արշավներին մասնակցել են՝ զեպի Արագած—147 հոգի, և համարյա թե նույն քանակությամբ զեպի մյուս լեռները՝ զեպի Հադիս, Մայմեխ, Աղմազան և այլն: 1935 թվի աստղաձև արշավին մասնակցել են 1450 հոգի, նույն 1935 թվին առաջին անգամ ձմռան պայմաններում, (նոյեմբեր ամսին) Արագած բարձրացան 10 համարձակ ալպինիստներ, վորը զժբախտաբար վողբերգական վախճան ունեցավ:

Հայաստանը լեռնային յերկիր է, և ալպինիզմի զարգացման համար մեզ մոտ կան խոշոր հեռանկարներ: Մեր յերկրի 4/5 մասը բարձր է ծովի մակերևույթից ավելի քան 1000 մետր:

Արագածն իր սքանչելի լեռնային տեսարաններով և հովիտներով, Զանգեզուրի լեռները, Լոռին՝ առատ բուսականությամբ և զմայլիչ լեռնային պանորամայով, Մայմեխը, Հադիսի և Քյոթանդաղ լեռները Կոտայքում ստեղծում են լեռնային տուրիզմի—ալպինիզմի զարգացման համար մեծ և փայլուն հեռանկարներ:

Սակայն Հայաստանի տուրիստական—ալպինիստական ամենաաչքի ընկնող և արժեքավոր ոբյեկտն է հանդիսանում Արագած սարը: Ամեն տարի թե ձմռան և թե ամառվա ամիսներին հարյուրավոր յերիտասարդ տուրիստներ—ալպինիստներ վերելք են կատարում զեպի

Արագածի 4 զազաթները: Արագածը զբաղվում է ալպի-
նիստներին վոչ միայն իր հարուստ լեռնային տեսակնե-
րով, հանքային նյութերով, այլ նաև ճոխ բուսականու-
թյամբ, բաղմապիտի ծաղիկներով և բնության լեռնային
անզուգական գեղեցկությամբ:

Ահա Սառնարանից սկսվող հովիտնական ձյունա-
շերտերը, ալպիական գեղեցիկ լճերն ու լճակները շրջա-
պատված լեռներով, կանաչավետ հովիտներում, հին սառ-
ցադաշտերի հետքերը, հանքային աղբյուրները, պատմա-
կան հուշարձանները: Պատահական չէ, վոր գեռ հին ժա-
մանակներից մինչև մեր օրերը Արագածը զարձել է ժողո-
վրդական գովերգության, հիացմունքի և սիրո առարկան:

Արագածը բարձր տեղ է,

Ձուրը հիվանդի գեղ է:

Յերգեր են հորինել նրա մասին ժողովրդական գու-
սանները, պատմել նրան շինականի դարդն ու ցավը և
հանգստություն փնտրել նրա փեշերին, Մանթաշի ձորե-
րում, նրա կանաչ լանջերին, և գովաշունչ զազաթներին:

Մեր ժողովրդական բանաստեղծ Ավետիք Իսահակ-
յանը գրել է+

Յես վոր մեռնեմ ինձ կ'թաղեք

Ալագյազի լանջերում,

Վոր Մանթաշից հովերը գան,

Վրաս հեփան ու յերթան:

Արագածը յերգել է Աշուղ Ջիվանին, բանաստեղծ
Հովհաննես Հովհաննիսյանը և առավելապես ինքը՝ նրա
ստորոտում ապրող բուն ժողովուրդը:

Արագածը լինելով Խորհրդային Հայաստանի ամենաբար-
ձրը լեռը՝ իշխում է մնացած բոլոր բարձրությունների վրա:

Արագածն իր տեղն ունի նաև մեր յերկրի անցյալ
պատմության մեջ: Արագածի վրայով են անցել նրան-
տիրելու նպատակով հին Արևելքի բաղմաթիվ տիրակալ-
ներ:

Ահա խալդական, Ուրարտույի յերկրի թագավոր Ար-
գիշտին, Վանի հուշակավոր տիրակալը, Հին Արևելքի առաջ-
նակարգ նվաճողներից մեկը: Նա նվաճեց նաև երիտինի
(Արագած) յերկիրը:

Մեծ Արգիշտին իր առաջին ուշադրությունը դար-
ձրեց Արագած լեռան վրա, վորի հարավային ստորոտ-
ները, մանավանդ ներկայացնում էյին մի գեղեցիկ և
արգավանդ յերկիր: Այդ յերկիրը, վորը հայկական աշ-
խարհագրության մեջ հայտնի յե «Արագածոտն» անու-
նով, Արգիշտին իր անունով ել կոչեց Արգիշտինա և հե-
տագայում, յերբ հիմք դրվեց այդտեղ Արգիշտինիսիլի
(Արմավիր) քաղաքին, վերջինս դարձավ այդ գեղեցիկ յերկրի
կենտրոնը: Քասախ գետի հովտում գեռ այսօր ել յերևում
են նշանավոր հին բերդեր և ժայռերի մեջ փորված աը-
ներ (Անրեբդ և Բյուրական):

Արգիշտին Քասախ գետի հովտով և Ապարանի ու-
սով հասնում է Արագածի հյուսիսային ստորոտին և
նվաճում է այնտեղ Կուլիանի յերկիրը (այժմ Ղուլիջան):
Հին Արևելքի նվաճողները շատ լավ գիտեյին, վոր նվա-
ճելով Արագածի հյուսիսային և հարավային ստորոտները
կարելի յե ամուր կերպով հաստատված լինել Արաքսի
հովտում: Արգիշտին, իր ռազմական ծրագիրը գլուխ բե-
րելուց հետո, մտավ մյուս նշանավոր լեռնանցքը, վորն
Արաքսի հովտից Ջանգլի հովտով տանում եր գեպի Կուր
գետի հովիտը: Այդ մասին Որդաքուլ գյուղի մոտ գտնվող
արձանագրության մեջ ասված է+ «Մեծ Արգիշտին ասում

ե խաղեացիներին,— յես նվաճեցի Կիեխունի քաղաք-
ները, յերկիրը բաժանեցի Իշտեկունի քաղաքից, յերկիրը՝
վորը կոչվում ե «Լճային»— այս արձանագրությունը
գրված ե սրանից մոտ 3 հազար տարի առաջ:

Արագածի մոտով են անցել առևտրական մեծ ուղի-
ները: Հայաստանի քաղաքների— Վաղարշապատի, Դվի-
նի, Յերևանի վրայով ե ուղղվել համաշխարհային տրան-
զիտային առևտրի քարավանային ճանապարհը: Հռոմեա-
կան լեգեոնները՝ Լուկուլոսի, Պոմպեոսի, Անտոնինոսի,
Մարկոս Ավրելիոսի, Հերակլ կայսեր բանակներն ավերում-
ներ գործելով անցել են Արագածի փեշերով ե գնացել
տիրելու Արևելքը:

Ահա 13-րդ դարի տիրակալներ Զաքարե ե Իվանե յեղ-
բայրները: Նրանք նվաճեցին «Երակի» յերկիրը ե Արագածի
արևելյան կողմում, մի բարձրունքի վրա ամրացրին ան-
առիկ Անբերդ ամրոցը: Նրանք լավ գիտեյին, վոր տիրել
«Երակին» (Արագածին) նշանակում ե տիրել Արարատ-
յան ե Շիրակի դաշտերին, վորոնք հարստության անըս-
պառ շահմարան են ներկայացնում: Այդ մասին մի ար-
ձանագրության մեջ գրված ե+ «Ի ՈՒԹ թուականութինս
ես Զաքարե ամիր սպասալար հայոց ե վրաց, վորդի մեծին
Սարգսի առի զանառիկ ամրոցս Անբերդո յազախնայծին
վորդոցն հաքարու» ե այլն:

Զաքարեն ամեն կողմից ամրացնելով Արագածը, իր
յեղբոր Իվանեյի հետ շինում ե նրա հյուսիս—արևմտյան
ստորոտում Հառիճա ամրոցը ե վանքը, վորը պահում ե
Մանթաշի ձորի բերանը:

Ոսղեբերի ճանապարհը հափանական ե, վոր յեղել ե
Արագածի Արևելյան ստորոտով Ապարանով՝ Քասախի հով-

տով, վորը սկիզբն ե առնում Արագածի հյուսիսում ե
պտտելով նրա արևելյան կողմից գնում ե հարավ ե Սե-
ջրի հետ թափվում ե Արաքսի մեջ: Այսպիսով՝ Քասախը
հանդիսանում ե բնական ե ամենահարմար հաղորդակցու-
թյան ճանապարհը Արաքսի հովտից մինչև Արագածի թի-
կունքը: Այդ միևնույն ուղղությունն ունի ե ներկայումս
գոյություն ունեցող խճուղին՝ Վաղարշապատից Աշտա-
րակի վրայով դեպի Սպիտակի լեռնանցքը, վորով ե
պարզվում ե նրա հին ծագումը*):

7-րդ դարում Արաբական հրոսակները վողոգեցին
Արագածի շուրջը: 11-րդ դարում նրանց փոխարինում են
թուրք—սելջուկների արշավանքները:

Սելջուկներից հետո 13-րդ դարի առաջին կեսում
վրանախոս անելով բարգավաճ հովիտները, յեկան մոն-
ղոլ-թաթարական բռնակալները+ ապա հայտնի յեն 14-րդ
ե 15-րդ դարերում Լենկթեմուրի արշավանքները ե այլն:

Արագածը դեպի իրեն ե գրավել բազմաթիվ հետա-
դառողների, պատմաբանների ե աշխարհագրագետների:

Հայտնի գիտնական Մ. Վազները 1843 թվականին՝ հու-
լիս ամսին ուսումնասիրության նպատակով Արագած բարձ-
րանալիս, Արագածի լանջերի գեղեցկությունից սքանչա-
ցած գրում ե, վոր «Արագածի մեծ զարտափից Ապարա-
նի լայն հովտի բացվող տեսարանը վերին աստիճանինը-
նկարագեղ ե»: Արագածի գեղեցիկ տեսարանները այն-
քան եյին հմայել նրան վոր, Արագածից ցած իջնելիս նա
ավերացնում, թե՛ «Այդպիսի մի սիրուն, անեղ յեվ վայ-
րենի պատկերից բաժանվելն ինձ համար դժվար յեղավ»:

*) Տես՝ „Արագածը պատմության մեջ“ եջ, 25:

յես իմ ուղեկիցներին ոթեման ուղարկելուց հետո յերկար ժամանակ այդ նկարչական դիրքը քննեցի, վորն արժանի յեր մի հմուտ վարպետի վրձինի, իմ հայրենակիցներին ներկայացնելու համար, վորոնք չեն կարող անձամբ Հայաստան գալ ճանապարհորդելու»։*)

Մի ուրիշ տեղ Վազները գրում են՝ «Ալայան յերկիրնեքի մեջ Հայաստանում Արագածի մեծ դարատափը շատ գեղեցիկ է։ Կովկասի մեջ չկա մի ուրիշ տեղ, վոր ծաղիկները պեսպեսությունով յեւ շատությունով, աղբյուրները առատությունով յեւ ամառային ոգի քաղցրությունով հավասար լինի Արագածին»։**

Այս վիթխարի հսկայական հրաբխային մասսիվն իր գեղատեսիլ պատկերով, վերին աստիճանի հարուստ բլրնությամբ, առողջարար ոգով յեւ քաղցրահամ ջրերով միշտ գրավել է ամենքին։ Հեղինակավոր բիոլոգ ակադեմիկ Աբելը Արագածի մասին գրելիս, ավելացնում է, վոր—«Արագածը զանազանվում է Հայաստանի յեւ Փոքր Ասիայի իր նման լեռներից, յեւ վոր նրա առանձնահատկությունների շնորհիվ է, վոր նա ստացել է առանձին ազգազրական նշանակութուն, լինելով իբրեւ կենտրոնավայր յեւ որրան հայ ժողովրդի։ Նրա բնության բանաստեղծական տեսարանները, վորոնցով դեռ 1500 տարի առաջ Մովսես Խորենացին արգարացրել է Հայաստանի հիմնավորումն Արագածի վրա, մնացել են մինչև որս անփոփոխ»։

Կովկասի հայանի կարտոգրաֆ Ա. Պատուխովը 1893 թվականի հունիս ամսի 25-ին Արագածի գագաթը բարձ-

* Մ. Վազներ «Ճանապարհորդություն ի Հայաստան», յեքես 114, ըստ գեոլոգ Հովհ. Կարապետյանի գրքի։

րանալուց հետո գրում են՝ «Առավոտյան ժամը 8-ից 15 րոպեանց մենք հասանք ամենաբարձր գագաթին, վորի բարձրությունը հավասար է 13, 167 մետրաչափի (4096 մետրի), այստեղից մեր աչքի առաջ պատկերացավ մի վեհագույն տեսարան + + + »։

Արագածը իր բոլոր յերկրորդական հրաբխային կենտրոնների հետ միասին ներկայացնում է մի հսկայական կոնաձև լայնատարած հրաբխային մասսիվ, վորն իր բարձրությամբ, թե Հայաստանի յեւ թե Անդրկովկասի ու Խորհրդային Միության սահմանների մեջ զանգված լեռների հետ համեմատած առաջին տեղն է բռնում։ Նրան կարելի չէ դասել աշխարհի ամենամեծ հրաբուխների շարքում։*)

IV.

ԼԵՈՆԱՅԻՆ ԱՐՇԱՎՆԵՐ

Ինչպես նախորդ գլխում հիշատակել ենք, Հայաստանում լեռնային արշավներն սկսում են կազմակերպվել 1929 թվից։ Նախկին Խորառժառ պրոֆմիության վարչության կողմից կազմակերպվում են արշավներ դեպի Արագածի գագաթները 1929 յեւ 1930 թվականներին։

Այնուհետև յերբ, 1930 թվականին կազմակերպվում է նախկին Պրոլետուրիզմի Ընկերությունը, այդ արշավների կազմակերպման յեւ դեկավարման գործով սկսում է զբաղվել վերջինս, ստեղծելով իրեն կից լեռնային սեկցիա Ասատուր Ասատրյանի, գեոլոգ Հ. Կարապետյանի,

*) Մեջբերումներն ըստ գեոլոգ Հովհ. Կարապետյանի «Արագած լեռը» գրքի էջ 8-9։

Վ. Դարյանի յեզ մի քանի ուրիշ ընկերների մասնակցությամբ:

Այնուհետև այդ լեռնային արշավները կրում են կազմակերպված բնույթ, ստեղծվում ե խոշոր հասարակայնություն յեզ լեռնային արշավների մեջ ե ընդգրկվում խոշոր թվով յերիտասարդություն՝ բանվորներ, կուսնտեսականներ, վորոնք սիրում են ալպինիզմը յեզ մեծ վոգեվորությամբ սկսում են զբաղվել ալպինիզմով—լեռնային տուրիզմով:

Մինչեզ 1930 թվականը ես Հայաստանում կատարվում եյին զանազան կազմակերպությունների կողմից լեռնային արշավներ, սակայն նրանք կրում եյին պատահական բնույթ, լեռնային տուրիզմին ծանոթ մի քանի ընկերների նախաձեռնությամբ:

Այսպես՝ դեռ 1925 թվականին, Հայկական հրաձգային գնդի հրամկազմից 5 հոգի, ոգոստոսին, բարձրանում են Արագածի հյուսիսային գագաթը (4096 մետրի): Վերելքը կատարում են ձիերով մինչեզ ձորը, վորը ստորոտից մինչև գագաթը տանող ճանապարհի կեսից մի քիչ բարձր ե, վորից հետո խումբը բարձրանում ե վոտքով:

Գագաթին խումբը կանգնեցնում ե կարմիր դրոշակ յեզ թիթեղյա ամանի մեջ թողնում ե մի գրություն վերելքի որվա մասին:

Իսկական մասսայական ալպինիզմը Հայաստանում սկսում ե զարգանալ միայն 1934 թվականից, յերբ 147 հոգի բարձրանում են Արագած, այնուհետև Մայմեխ, Հուդիս ե մյուս լեռները: Սա Հայաստանի ալպինիզմի մասսայական զարգացման առաջին տարին ե: Սա առաջին աստղաձև արշավն եր, վորը կազմակերպել եր նախկին

պրոլետտուրիզմի ընկերությունը զեպի Արագածի գագաթները: Հայանի յե, 1935 թվականի հագարի առաղաձե արշավը զեպի Արագածի գագաթները, վորը Հայաստանի ալպինիզմի զարգացման պատմության մեջ կմնա, վորպես մեր որերի յերիտասարդության հերոսության ու խիզախության փայլուն որինակ, վորի նախաձեռնությունը պատկանում եր Հայաստանի Լենինյան Կոմյերիտմիությունը: Այդ արշավին մասնակցում եյին 156 կին:

Այա՝ 1935 թվականին կատարվեց Հայաստանի լավագույն ալպինիստների արշավը զեպի Կովկասի ձյունապատ հակա Ելբրուսի գագաթը, նվիրված մեր սքանչելի խորհրդային հանրապետության, Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակին: Այդ արշավը, վորն անցավ շատ հաջող, Հայաստանի ալպինիզմի պատմության մեջ խոշոր տեղ ե գրավում: Այդ արշավով ստեղծվեց ալպինիստների մի նոր կադր, վորն այսօր պատվով կրում ե խորհրդային Միության ալպինիստի կոչումը ե կրժքանշանը:

Ինչպես հայանի յե, կոմունիստական (բ) կուսակցությունը ե խորհրդային կառավարությունը բարձր գնահատելով Ելբրուսի արշավի մասնակիցների կատարած աշխատանքը նշեցին այդ բարձր պարգևներով—Պատվոգրերով ե մի շարք այլ պարգևներով: Այնուհետև՝ նշանակալից ե 1936 թվականի ե 1937 թվականի Ապարանի կոլտնտեսական ալպինիստների արշավը դահուկներով, ձմռան դաժան պայմաններում, Թաքարլուգյուղի դահուկավոր՝ ալպինիստ Աբաս Խալաթյանի մասնակցությամբ:

Այդ ընկերները նույնպես արժանացան պարգևների: Նրանք Արագածի գագաթին կարմիր դրոշ գրեցին:

Չենք ուզում ծանրաբեռնել այս ախնարկը մանրա-

*) Ծան. հեղինակի. Արագածն ունի 4 գագաթ:


մասն նշելով այն բոլոր արշավները, վորոնք կատարվել են վերջին տարիների ընթացքում դեպի մեր լեռները, առանձնապես դեպի Արագած:

Լեռնականի, Արթիկի, Ապարանի, Բյուրականի, Վաղարշապատի, Հոկտեմբերյանի մի շարք լավագույն լեռնային տուրիստներ ամեն տարի, նույնիսկ ձմռան դաժան պայմաններում դահուկներով մի քանի անգամ բարձրացել են Արագածի գագաթները և ամեն ժամանակ այդ վերելքները կատարվել են մեծ հաջողությամբ:

Վերջին տարիների ընթացքում մեր մի շարք շրջաններում ստեղծվել են լեռնային տուրիզմի—ալպինիզմի լավագույն կադրեր, ենտուզիաստներ, վորոնց թիվը հասնում է հարյուրների: Սակայն շատ վատ է դրված յեղել այդ կադրերի զստտիարակության, անհրաժեշտ ալպինիստական գիտելիքներով զինելու գործը: Նախկին պրոլետտուրիզմին կից գործող լեռնային սեկցիան, վորը գլխավորել են պատահական մարդիկ, յեղել է մի ինքնամիոփ կազմակերպություն և լայն մասսայական աշխատանք չի կատարել, լեռնային տուրիզմը սիրող մեր հարյուրավոր ընկերների մեջ, միանգամայն կտրված է յեղել շրջաններից:

Լեռնային սեկցիայի աշխատանքների սխալ դրվածքի և վոչ ճիշտ ղեկավարման շնորհիվ եր, վոր տեղի ունեցավ 1935 թվականի Արագածի այն վողբերգությունը, վորը ծանր հարված հասցրեց Հայաստանի տուրիստական կազմակերպությանը և վերջին յերկու տարվա ընթացքում ալպինիստական շարժումը վորոշ փակուղու մեջ ընկավ:

Դա՝ Հայաստանի Խորհրդայնացման 15-ամյակի առթիվ կազմակերպված առաջին ձմեռային լեռնային ար-



շափն եր գեպի Արագածի գագաթը: Ալպինիզմի 10 յերիտասարդ ենտուզիաստներ, համակված հեղափոխական բարձր տրամադրությամբ գեպի Արագածի ձյունապատ գագաթն ելին բարձրացնում մեր սիրելի առաջնորդ ընկեր ԼՆՆԻՆԻ կիսանդրին, վորով ցանկանում ելին հավերժացնել մեր հանրապետության 15-ամյա տարեդարձը և ցույց տալ իրենց անհուն սերն ու նվիրվածությունը գեպի մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը:

Այս բարձր և խոշոր գաղափարը վորքան վողեորում եր 10 յերիտասարդ ալպինիստներին, նույնքան անպատասխանատու և անփուլթ վերաբերմունք ցույց տվին գեպի այդ արշավը Հայաստանի պրոլետարիզմի նախկին դեկավարները:

1935 թվականի հազարի աստղածև արշավը գեպի Արագած, թեբևս հաջողությամբ պսակվեց վոչ թե նրա համար, վոր տուրիզմի դեկավարները շատ լավ ելին կազմակերպել գործը, այլ նրա համար, վոր այդ արշավի կազմակերպման մեջ խոշոր աշխատանք եր կատարել Հայաստանի կոմյեբիտմիությունը յեվ տուրիստական ակտիվը: Այդպիսի պատասխանատու արշավ, ինչպիսին հազարի արշավն եր, կարող եր նույնպես վողբերդական վախճան ունենալ, յեթե բնությունը չնպաստեր: Բացառիկ լավ յեղանակները Արագածի վրա նպաստեցին, վորպեսզի արշավը հաջող անցնի: Այն ժամանակ, յերբ յեղանակների վատանալու դեպքում, Արագածի լանջերին մենք չունենք պատասպարվելու յեվ վոչ մի ապաստարան, բազմամարդ արշավներ հանել գեպի Արագածի գագաթը, միանգամայն պատասխանատու գործ ե և անմտություն: Հայաստանի տուրիստական կազմակերպությունն իր ժա-

մանակին առաջ չմղեց Արագածի լանջերին ոթեվաններ կազմակերպելու խնդիրը, վորը լուրջ խոչընդոտ ե հանգիստնում հետադայում մեզ մոտ մասսայական ալպինիզմի զարգացման համար: 1935 թվի ձմեռային արշավի տխուր վախճանը ցույց տվեց, վոր Արագածի լանջին ոթեևան լինելու դեպքում մենք խոշոր չափով ոժանդակած կլինենք լեռնային տուրիզմի-ալպինիզմի զարգացմանը և կանխած կլինենք բոլոր դժբախտ դեպքերը: Նման ոթեվաններ կառուցված են Կովկասի և Միության մի շարք ձյունապատ լեռների լանջերին: Մեզ մոտ ևս այդ խնդիրը դրվել ե, բայց մինչև որս գործնական լուծում չի ստացել:

Համամիութենական Կենտգործկոմի 1935 թվի վորոշմամբ պրոլետարական տուրիզմի և եքսկուրսիաների ընկերությունը վերացվեց, իսկ նրա ֆունկցիաները հանձնվեցին պրոֆկազմակերպություններին: Ալպինիզմն անջատվեց և այդ գործի դեկավարությունը հանձնվեց ԺԿՍ-ին կից ֆիզկուլտուրայի և սպորտի գործերի կոմիտեին: Այդ բաժանումով, թե՛ տուրիստական աշխատանքներն ավելի լայնացվում են և ծավալվում և թե՛ ամրապնդվում ե ալպինիզմի նյութական բազան և լեռնային տուրիզմը ոգտագործվում ե վորպես աշխատավորության հանգստի կազմակերպման լավագույն միջոցներից մեկը:

V.

ՄԵՐ ԱՐՇԱՎՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մեր լեռնային արշավները, վորոնք կատարված են գեպի Հայաստանի լեռները յեվ գեպի Ելբրուս ամեն ժամանակ գիտական -հետազոտական նպատակներ չեն հետապնդել:

Այդ արշավներից շատերը կրել են միակողմանի, տուրիստական բնույթ: Սա յետ ասում եմ միայն լեռներն ուսումնասիրելու, հետազոտելու տեսակետից:


Անշուշտ, այդ արշավների ընթացքում մեր տուրիստական ակտիվը խոշոր գործ է կատարել, մոտիկից ծանոթանալով մեր սոցիալիստական հոյակապ կառուցումներին, կուլտուրական մեծ աշխատանք է կատարել մեր կոլտնտեսականների հետ ունեցած մի շարք հանգիստումների ժամանակ, գարնանացանի, բերքահավաքի կապակցությամբ:

Նրանք ծանոթացել են Հայաստանի պատմական վայրերի հետ, այդ մասին գրույց կազմակերպելով գյուղերում և այլն: Այդ խնդրում խոշոր ծառայություն է մատուցել նախկին ՈՊՏԵ-ին կից կազմակերպված գիտական խորհուրդը, վորին մասնակցել յեն մեր լավագույն գիտական աշխատողները: 1936 թվականին արեւի խավարումը գիտելու նպատակով կազմակերպվեց մի լեռնային արշավ Ղեկի Հագիս սարը, վորտեղից տուրիստները գիտեցին արեւի լավարումը: Վերելքի նախորդակին արշավի մասնակիցները կազմակերպեցին գիտական գրույց Ձառ գյուղի կոլտնտեսականների համար արեւի խավարման մասին:

Գիտական խոշոր աշխատանք է կատարված Արագածի լեռնային արշավների ժամանակ: Այդ արշավների ընթացքում խոշոր տեղ է տրվել Արագած սարի ուսումնասիրությանը: Այսպես՝ այդ արշավների մասնակիցների առաջ դրված են յեղել հետեւյալ խնդիրները.

1. Բազմակողմանիորեն ուսումնասիրել Արագածի տուրիստական մարշրուտները յեւ որյեկաները:

2. Ծշտել հանքային աղբյուրների ցուցակը:



3. Ճշտել ծծմբի հանքերի առկայությունը և նրանց ոգտագործման հնարավորությունները:

4. Ճշտել Արագածի գագաթների ձորերի, հեղաղատների, լճակների տեղական անվանակոչությունները:

5. Անվանակոչել Արագածի մեծ ջրվեժը և պարզել նրա ոգտագործման հնարավորությունները:

Բացի զրանից մարշրուտներին մասնակցող առանձին խմբակներն ուսումնասիրել են Արագածի բուսական գոտաները, բույսերի տեսակները, քոչվորական կյանքը, խոտնարանի հավիտենական ձյունը, հին սառցադաշտերի հետքերը և այլն:

Առաջադրված այդ խնդիրները, թեև կատարված են, բայց այդ աշխատանքը լիովին չի հաշվի առնված և արձանագրված: Ինչ վերաբերում է մարշրուտների խնդրին, սա ամենադրական և ամենաարժեքավոր աշխատանքներից մեկն է, վորը կատարված է Արագածի արշավների ընթացքում: Այսպես՝ հայտնաբերված և ճշտված են հետևյալ մարշրուտները:

1. Բաշ—Ապարանից գետի հյուսիսային գագաթը—խառնարան և վերադարձ Ղազնափարի վրայով:

2. Արթիկից գետի հյուսիս—արևելյան գագաթը խառնարան յեղ Ղազնափարի վրայով վերադարձ:

3. Բյուրականից Սեղ լճի վրայով գետի Արագածի հարավ—արևելյան գագաթը, այնտեղից խառնարան և Ղազնափարի վրայով վերադարձ:

4. Ղազնափարից գետի խառնարան և հարավ—արևելյան գագաթը և Սեղ ու ԲԱԳՈՒ լճերի վրայով վերադարձ Արթիկ:

Այնուհետև խոշոր արժեք է ներկայացնում Արա-

գածի վրա ընկած մի շարք անանուն որջեկանների անվանակոչումը, վորի մասին մենք ունենք Հայկական ԽՍՀ Կենագործկոմի 1934 թ. հոկտեմբերի 17-ի վորոշումը:

Նկատի ունենալով Արագածի շուրջն ստեղծված խոշոր հետաքրքրությունը և յեղնելով հետադաշում կազմակերպվելիք արշավների հաջողությունն ապահովելու անհրաժեշտությունից, Հայկական ԽՍՀ Կենագործկոմը հարգելով նախկին ՈՊՏԵ-յի միջնորդությունը, հաստատեց հետևյալ անանուն որջեկանների անվանակոչումը:

1. Արագածի գլխավոր խառնարանից գետի Ղազնափարի ձորը (Գեղհովիտ) հոսող յերեք ջրվեժներն անվանակոչել՝ ա) ՎԵՐԻՆ, բ) ՄԻՋԻՆ, գ) ՆԵՐՖԻՆ:

2. Հյուսիսային գագաթից հոսող (Քաղցր ջրի հովտում) ջրվեժն անվանակոչել «Տուրիզմի» անունով:

3. Արագածի 5-րդ ամենափոքր գագաթի ներքև յեղած տասը լճակների (2 մեծ և 8 փոքր) հովիտն անվանակոչել՝ «ԼՃԱԿՆԵՐԻ ՀՈՎԻՏ»:

4. Շիրադալայի և Ղազնափարի մեջտեղ գտնված Լուսաղբյուրի մոտիկ բերդն անվանակոչել՝ «ԼՈՒՍԱՐԵՐԴ»:

5. Ղազնափարի հանդիպակած բարձունքների վրա գտնվող անանուն լիճը, վորին տեղացիները կոչում են լճում խեղդված Ամրոյի անունով, ընդառաջելով ԽՍՀ ՄԻ գիտությունների Ակադեմիայի բրիգադի ցանկության անվանակոչել՝ «ԼԵՍՍՄԻՆԳ ԼԻՃ»:

6. Ղազնափարի կամ Դալիչայի հովիտն անվանակոչել համաձայն Շոպենի հիշատակության—«ԳԵՂՀՈՎԻՏ»:

7. Տուրիզմի ջրվեժի հովիտն անվանել՝ «ՔԱՂՑՐ ՋՐԻ ՀՈՎԻՏ», (նկատի ունենալով այն, վոր տեղացիները հոսող ջուրն անվանում են Քաղցր ջուր):

Խոշոր գիտական արժեք է ներկայացնում 1934 թվի աստղաձև արշավի ժամանակ մարշրուտի ղեկավարներից մեկի հայտնաբերած նշանագրերը Արագածի վրա, Բագու լճի մոտ, վորը գիտական և պատմական մեծ նորություն էր:

Ինչպես հետագայում պարզվեց, այդ նշանագրերը (այծագրերը) պատկանում են Հայաստանի այլ վայրերում և Արագածի մյուս մասերում հայտնաբերված այծագրերի խմբին և ունեն շատ կարևոր պատմա-հնագիտական նշանակություն: Մի քանի գիտական աշխատողների յեզրակացությունը այդ նշանագրերը մինչև այժմ հայտնաբերված նախահայկական նշանագրերի մեջ համարվում են ամենահինը և հավանաբար հետագայում կատարելագործվելով վերածվել են այծագրերի: Այդ հայտնաբերումը ուշադրություն արժանացավ Հայկական Կուլտուրայի Պատմության ինստիտուտի կողմից: Ինստիտուտի 1934 թվականի, նոյեմբերի 3-ի նիստում հաստատվեց, վոր այդ հայտնաբերումը գիտական մեծ արժեք ունի: Այդ առթիվ ինստիտուտի վորոշման մեջ ասվում է. 1. Հատուկ գիտական եքսպեդիցիա ուղարկել այծագրերի հայտնաբերման վայրը 2. Մինչև հիմա հայտնաբերված այծագրերի հետ միասին, այս նոր այծագրերը ևս հրապարակել: Քարտեզի վրա յե անցկացվել Արագածի 5-րդ գագաթը, վորը մինչև հիմա նշանակված չի յեղել, ինչպես նկատել է նաև ԽՍՀՄ-ի Գիտությունների Ակադեմիայի բրեզադը, վորը լուրջ ուսումնասիրության է յենթարկել Արագածը:

Արագածի լեռնային աստղաձև արշավների և մի շարք այլ արշավների մասնակիցները այցելել են պատմական վայրեր, ուսումնասիրել և ծանոթացել են այդ վայրերի պատմության հետ: Այսպես, նրանք այցելել են՝ Լուսա-



բերդը, փորը գտնվում է Ղազնաֆար և Շիրադալա գյուղերի միջև, Վիշապների բլուրը (Ղրզլըղիարեթ), փորի վրա յեն գտնվում հին հեթանոսական պաշտամունքի առարկաներից փիշապները: Ամասի բերդը—Ղազնաֆար և Թաքարլու գյուղերի միջև, Համբերդը՝ միջնադարյան Հայաստանի նշանավոր բերդերից մեկը, Արխաշենի ջրանցքները, Ախթամար բերդը՝ Վոսկեսպոզ գյուղի մոտ, նախաառարտական բազմաթիվ արձանագրություններ և այլն: Բացի այդ բոլորից, համապատասխան մասնագիտությունները զբաղվողները հավաքել են քարեր, բույսեր, գեղարույսերի հավաքածուներ, նյութեր ՀՍՍՀ աշխարհագրություն և լեռնագրություն դասավանդման գծով և բազմաթիվ մի շարք այլ ուսումնասիրություններ: Այսպիսով՝ մինչև հիմա մեր աշխատավորություն լայն մասսաներին անձանոթ Արագածը դարձել է այժմ հրանց ամենասիրելի աուրխատական վայրերից մեկը*):

VI*

ԴԵՊՈԼԵՆՆԵՐԸ

Խորհրդային Հայաստանի միջով անցնող հսկայական լեռների շարանը սովորաբար կոչվում է Փոքր Կովկասյան լեռնաշար կամ Անտիկովկաս:

Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հյուսիսից ձգվող լեռնաշարն սկսվում է Խոնավ կամ Մթին լեռների շարունակությունը կազմող Կարախաչի լեռնաշղթայի Լեյլի լեռնագագաթից (3202 մետր): Այդ լեռնաշարը հարավային և ապա գուգահեռական ուղղությամբ ձգվելով հասնում է Արաքսի ավերին կամ Իրանի սահմանին:


*) Մեջբերումներն ըստ «Արագածի աստղաձև արշավը» ժողովածուի էջ 6—7:

Փ. Կովկասի կամ Հայկական լեռնաշարի ընդհանուր յերկարությունը կլոր թվով մոտ 500 կիլոմետր է: Նա ունի բազմաթիվ մանր ու մեծ ճյուղավորություններ, փորոնք տեկանիկ ծագում ունեն և միանում են հրաբուխային ծագում ունեցող վիթխարի զանգվածների հետ:

Այս լեռնաշարի լեռնագրությունը ընդհանուր հարմոնիան լրացնում են առանձին կանգնած հրաբխային հսկաներ և բազմաթիվ մանր ու մեծ գագաթներ, բլուրներ ու բարձրություններ, փորոնք խոշորագույն մասին գեռ չի դիպել ալպինիստի փոքր: Հայկական լեռնաշարի գեղեցիկ կոլորիտը լրացնող համեմատաբար մանր շղթաներն ու գագաթները հետաքրքրական ու հարուստ նյութ կարող են դառնալ ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն համար:

Ալպինիստական արշավները առանցքը պետք է դառնա այդ հետաքրքիր գագաթների աշխարհագրական, յերկարաբանական, բուսաբանական և պատմական ուսումնասիրությունը: Մենք մինչև հիմա մեր ուշադրությունը բեռել ենք միայն Արագածի վրա: Այժմ Հայաստանի ալպինիստների հետաքրքրության ու ուշադրության կենտրոնը պետք է դառնան Փոքր-Կովկասի կամ Հայկական լեռնաշարի վրա գտնվող մյուս գագաթները: Ահա այդ հոյակապ լեռնաշարը, փորն սկսվում է հյուսիսից Կարախաչի լեռնաշղթայով՝ 20 կիլոմետր յերկարությամբ, իր Լեյլի (3202) լեռնագագաթով: Ապա հաջորդում են միմյանց շարունակաբար՝ Զիբուխլույի լեռնաշղթան—35 կիլոմետր յերկարությամբ, Աղմանդան լեռնագագաթներով (2998 մ): Բզովդալի լեռնաշղթան—30 կիլոմետր յերկարությամբ, Սպիտակ (2119 մ), Զախախ 2370 մ) և մի քանի ուրիշ լեռնագագաթներով:

Փ ա մ բ ա կ ի լեռնաշղթան — 85 կիլոմետր յերկարությամբ, վորը ձգվելով արևմուտքից դեպի արևելք հասնում է Սևանա լճին, ՄԱՅՄԵԽ — (3093), Խ ա լ խ ա լ (3165), Թեժ Ա հ մ ե դ (3100) և մի շարք ուրիշ լեռնա-
գագաթներով:



Մ ա յ դ ա ն ի լեռները, Արեգունու կամ Շահ-
Դաղի լեռնաշղթան, Ջանգեզուրի լեռնաշղթան,

վորն ամենից յերկարն ու բարձրն է ամբողջ Անգրկով-
կասում և առաջնության տեղը միայն Մեծ Կովկասյան
լեռնաշղթային է զիջում: Նրա յերկարությունը 200 կիլո-
մետր է: Նրա ամենաբարձր գագաթը Կ ա պ ու ջ ը ղ ն է,
վորն իր 3920 մետր յերկնամբարձ սլացումով յերկրորդն
է Խորհրդային Հայաստանում: (Առաջինը Արագածն է):

Ապա նրա Դափլան կամ Այշինգիլ գագաթը՝ 3905
մետր բարձրությամբ, Յ ա ղ լ ու ն՝ 3843 մետր, Դադան-
դաղը՝ 3858 մետր և այլն:

Ա դ բ ա բ ա յ ի լեռները, Շիրակի լեռնաշղթան, Արա-
յի լեռը՝ 2610 մետր բարձրությամբ, վորը գտնվում է
Արագածի հարավ-արևելյան կողմում: Մ ի ս խ ա ն ա յ ի լեռ-
նաշղթան — Ա լ ի բ ե կ գագաթով (2860 մ.) և այլ գագաթ-
ներով:

Ծ ա ղ կ ու ն յ ա ց շղթան, Ա դ մ ա դ ա ն ի լեռնաշղթան —
80 կիլոմետր յերկարությամբ, վորը ձգվում է հյուսի-
սից — հարավ, Կ ա ր մ ի ը լ ե ու (3104 մ.) Ս ե լ ե ու (3146),
Ուշթափա (3252) և մի շարք այլ լեռնագագաթներով:

Հ ա ռ ա վ-Ս ե ա ն ի լեռնաշղթան — 65 կիլմ. յերկա-
րութ. — Դ ա ռ ա լ ա գ յ ա զ ի, Լ ա լ վ ա ը-Լ ե ջ ա ն ի, Ա դ ա-
տ ե ֆ ի, Մ ը ղ ու զ ի, Շ ա մ շ ա դ ի ն ի, Ա ը ե վ ի ք ի, Խ ու ս-
տ ու փ ի, Ք ա ջ ա ը ա ն ց ի, Բարքուշատի լեռնաշղթաները:

Հ ա դ ի ս ը՝ (2542) Կոտայքում, Քյոթան — Դաղ՝ Փանտա-
նի մոտ (3211) և այլն:

Ահա հայկական կամ փոքր Կովկասյան այն լեռնա-
շարը, վորի վրայով պիտի անցնեն Հայաստանի ալպի-
նիստներն առաջիկա տարիների ընթացքում և յերկրի

հարուստ ընդերքն ի սպաս դնեն մեր սոցիալիստական շինարարությանը, ուսումնասիրելով այդ լեռները յերկրաբանական, աշխարհագրական, բուսաբանական, պատմական, ջրերի ուսումնասիրության տեսակետից և այլն:

Նրանք պետք է ուսումնասիրեն լեռնային ճանապարհները, ճշտեն անվանակոչությունները, հաշտնաբերեն նորություններ, ճշտեն քարտեզները: Այդ տեսակետից խոշոր նշանակութիւն պետք է տալ առաջիկա տարիներում նախատեսված արշավներին դեպի Կապուշըղ, Արագած, Աղմաղանի լեռները, Մայմեխ, Միսխանայի և մյուս լեռները:

Առանձնապես խոշոր հետաքրքրութիւն է ներկայացնում Կապուշըղը:

Կապուշըղը վաղուց է ինչ գրավում է Հայաստանի ալպինիստների ուշադրութիւնը: Բայց մինչև հիմա չի հաջողվել լինել նրա գագաթին: Այդ լեռնագագաթով հետաքրքրվել է և սկսել է նրանով զբաղվել Հայաստանի յերկրաբանական ինստիտուտը:

Այս լեռնագագաթն իր հարուստ հանքային և քարային տեսակներով ուսումնասիրության խորն աղբյուր է հանդիսանում և հսկայական նշանակութիւն ունի մեր սոցիալիստական շինարարության համար: Այդ լեռնագագաթի գեոլոգիական ուսումնասիրութիւնը պետք է կատարեն մեր ալպինիստները: Սա կլինի խոշորագույն մի գիտական աշխատանք Հայաստանի ալպինիստների համար:

Խոշոր նշանակութիւն ունի նաև Աղմաղանի լեռների ուսումնասիրութիւնը, առանձնապես՝ նրա սառցադաշտների և ձյունաշերտերի ուսումնասիրութիւնը:

* * *

Տարեց-տարի բազմապատկւում է խորհրդային ալպինիստների թիվը, ընդգրկելով քաղաքի ու գյուղի աշխատավորության նորանոր մասսաներ: Ալպինիզմը՝ ֆիզկուլտուրայի հետ միասին ժողովրդական առողջության մի հզոր պրոֆիլակտիկ միջոց հանդիսանալով, կենցաղի և մարզկանց սոցիալիստական վերափոխման հզոր մի լծակ է, սոցիալիստական շինարարության կուլտուրական և քաղաքական մի խոշոր գործոն, իսկ ալպինիստները՝ մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու համար պատրաստ՝ խիզախ, համարձակ խորհրդային հայրենասերների պանծալի մի բանակ:

Հազարավոր ալպինիստներ քայլում են լայնածավալ Խորհրդային Միության մեջ, ցնծազին և աշխուժ արձագանքելով բնության կանչին, այրվելով ու կոփվելով առողջարար արևի ճառագայթների ասի, դաշտերի ու լեռների մաքուր և թարմ ոգի մեջ, նոր լիցք ստանալով մեր արևոտ, սոցիալիստական հայրենիքի համար մղվող հետագա պայքարի համար:

ԱՆՀԱՂԹԵԼԻ ԳԱԳԱԹԸ

Հիմալայան լեռների վրա հպարտորեն դեպի յերկինք ե խոյացել հսկա Եվերեստը: Նա անհաղթ գագաթ է, նրան չի տիրացել մարդը և մարդկային վոտքը չի տրորել նրա հավիտենական կուսական ձյունը:

Տարիներ շարունակ բազմաթիվ ալպինիստների փափագն ե յեղել տիրել Եվերեստը, բայց այդ բոլոր փորձերը անցել են ապարդյուն:

Յերկար ժամանակ աշխարհագրագետներն անգամ չեն իմացել Եվերեստի իսկական առիղը և շփոթել են այն, նույն լեռնաշղթայի վրա գտնվող նրան մոտիկ Գաուրի-գանկար գագաթի հետ:

Եվերեստն աշխարհի ամենաբարձր գագաթն ե, վորն ունի ծովի մակերևույթից 8,882 մետր բարձրություն: Վերջին 16 տարվա ընթացքում 5 անգլիական գիտական եքսպեդիցիաներ փորձ են արել գրոհել Եվերեստը, բայց այդ բոլոր գրոհներն ել անցել են անհաջող:

Այդ եքսպեդիցիաների մասնակիցներից միայն 14 հոգի նահատակվել են սար բարձրանալիս: Անգլիական այդ եքսպեդիցիաները գրոհել են Եվերեստը 1912, և 1922 թվականներին, վորից միայն վերջինին ե հաջողվել հասնել մինչև 8604 մետր բարձրության:

1936 թվին նորից կազմակերպվեց անգլիական մի եքսպեդիցիա գիտնական Ռետլեջի ղեկավարությամբ և փորձված ալպինիստների մասնակցությամբ:

Սակայն այս եքսպեդիցիայի մասնակիցները չկարողացան հասնել նույնիսկ այն բարձրության, վորին հասել եյին 12 տարի առաջ կազմակերպված եքսպեդիցիայի մասնակիցները: Այն ժամանակ ալպինիստներին մնացել եր հասնելու մինչև գագաթը միայն 200 մետր:

Վերջին եքսպեդիցիայի ղեկավար Ռետլեջը հրաժարվել ե հետագայում այլևս վորև ե փորձ կատարելու Եվերեստի գագաթը հասնելու համար:



Պատգ խմբագիր՝ Գ.Ր. ՄԻՆՍՆՅԱՆ

Գլավլիտի լիազոր 16036. Պատվեր № 209.

Տիրաժ 1500.

Քուղի՝ 62×27. Տպ. 3 մամուլ.

Տրված է արտադրության 5 մարտի 1938 թ.

Տրված է տպագրության 20 ապրիլի 1938 թ.

Գինը 1 ռ. 50 կ.

Ֆեբեկան «Նորհրդային Հայաստան»-ի հր. տպարան

ՀՀ Ազգային գրադարան



NL0306666

ԳԻՆԸ 1 Ռ. 50 Կ.

8728

В. ДАРЬЯН

Альпинизм в Армении

Издание комитета по делам физкультуры
и спорта при СНК Арм. ССР.